

## ԱՊՎԱՆՔԻ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ ՆԱԽԱԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՇՈԶԱՆՈՒՄ

### ՀԵՆՐԻԿ ԱՎԱԶՅԱՆ

Մթ. II դ. արշալույսին Ս. Եղիշայի քարոզությամբ Աղվանքում սկսվում են քրիստոնեության տարածման աշխատանքները՝ և շարունակվում նրա հաջորդների կողմից, որոնցից առաջնները խորացրին ու երկրում ամրապնդեցին իրենց նախավկայի սերմանած առաքելական հավատը, մյուսներն այն րարձրացրին պետական կրոնի աստիճանի, ուրիշներն էլ հարատացրին նրա բովանդակությունը հոգեոր նոր խորհուրդներով։ Հայ ժամանակիրները՝ Մովսես Կաղանկատվացին, Կիրակոս Գանձակեցին, Միփիթար Գոչն ու Միփիթար Այրիվանեցին, պահպանել և մեղ են հասցրել Աղվանքի քրիստոնյա այդ գործիչների անվանացանկերը՝ նրանցից ոմանց ինքնության և կատարած գործերի մասին թուցիկ տեղեկություններով ու ժամանակագրական որոշ տվյալներով։

Եղել են հեղինակներ, որոնք օգտավել են հիշյալ ցուցակներից, բայց մինչ օրս ոչ մեկը գրանք հատուկ հետազոտության նյութ չի դարձրել։ Մինչդեռ զրա կարևորությունն աներկբա է ինչպես Աղվանքում քրիստոնեության պատմության հարցերի, այնպես էլ երկրում տեղի ունեցող քաղաքական մի շարք իրադարձությունների ու զրանց ժամանակի լուսաբանման զգածում։ Սակայն մեր նպատակը դրանք իրենց ամբողջական տեսքով քննարկելը չէ։ Մեզքի համար սահմանափակվել ենք զրանց այն մասով միայն, որոնցում թվարկված հոգեոր առաջնորդները գործել են մինչեւ Աղվանից կաթողիկոսության ձեավորումը և որոնց գործունեությունը ծավալվել է քրիստոնեության վաղ շրջանում։

Մինչ արձարծվող հարցի պարզաբանմանն անցնելը, անհրաժեշտ ենք համարում նախ և առաջ, ըստ առանձին պատմիչների, ներկայացնել այդ ցանկերի մեջ հետաքրքրող մասերը և տարընթերցումները՝ ցայտունության համար միասուն կառուցվածքով։

ՄՈՎՍԵՍ ԿԱՂԱՆԿԱՏՈՒՄԻ (Գլուք Գ, գլ. Ի՞Դ)

«Պատճառ լուսաւորութեան մերոյ է

Սուրբ Եղիշայ՝ աշակերտ սուրբ առաքելոյն թաղէսսի, որ ձեռնադրեցաւ յերուսաղէմ ի ձեռաց սբոյն Յակոբայ։ Սա եկն լուսաւորիչ երից աշխարհացու Չորայ, Լինաց և Աղուանից, և ի սոյն կատարեցաւ վկայութեամբ։  
Եվ ապա

<sup>1</sup> Հ. Ա վ ա զ յ ա ն. Քրիստոնեության Աղվանք ներթափանցման ուղիներն ու ժամանակաշրջանը՝ «Պատմա-բանագիրական հանդես», 2002, № 2, էջ 131-141:

Տէր սուրբ Գրիգորիս Պահլաւիկ՝ թոռն մեծին Գրիգորի Հայոց լուսաւորչին երկատեսակ փառօք կացեալ ի նոյն աթոռ:

Սուրբն Շուփհաղիշոյ կաթողիկոս արևելեայց յերուսաղեմէ եկեալ:

Տէր Մաթէոս

Տէր Սահակ

Տէր Մովսէս

Տէր Պանդ

Տէր Ղազար

Տէր Դրիգոր (Զեռագրերը հավելում են. «Տէր սուրբն Գրիգորիս արշակունեաց... որահալաւիկն Գրիգորոյ... Հայոց լուսաւորչէ երկատեսակ փառօք կացեալ ի նոյն աթոռ... սուրբ Գրիգոր յԱրշակունեացի ի պահլաւիկն Գրիգորոյ Լուսաւորչէն կացեալ ի նոյն աթոռ»<sup>2</sup>)

Տէր Զաքարիա

Տէր Դաւիթ

Սուրբ Յովհան, որ Հոնացն եղեւ եպիսկոպոս տէր Հայլասլետական շնորհիւ, զորապէսն չգիտեմք:

Տէր Երեմիա. ի սորա աւուրս արար գիր Աղուանից Երանելին Մեսրոս, որ և Հայոց և Վրաց ետ զնշանագիր ջանիւ մեծաւ»<sup>3</sup>:

#### ԿԻՐԱԿՈՍ ԳԱԱԶԱԿԵՑԻ

«Առաջին պատճառ լուսաւորութեան կողմանցն Արևելից ասեն զՍուրբն Եղիշէ զաշակերտ

մեծին Թագէոսի առաքելոյն, որ յետ մահուան սրբոյ առաքելոյն գնացեալ յերուսաղէմ առ Յակոբոս Եղբայրն տեառն և ի նմանէ ձեռնագրեալ եպիսկոպոս գայ ընդ աշխարհն Պարսից և Հասանէ յաշխարհն Աղուանից»<sup>4</sup>:

... Ապա. «Սուրբն Շուփհաղիշոյ հկաց եպիսկոպոս: Իսյց վասն տոնն այսորիկ յասաջ կարգելոյ՝ երկմտութիւն գոյ մեզ զի որ գրեաց զպատճութիւն Աղուանից, զայս անունս կարգէ յաւուրս Վաչագանայ բարեպաշտի լեալ. և այսմ վկայ օրէնքն, զոր եգ Վաչագան արքայ ամենայն եպիսկոպոսքն Աղուանից, և գրե այսպէս. «Ես, Վաչագան Աղուանից արքայ, և Շուփհաղիշոյ արքեպիսկոպոս Պարտաւայս»: Եվ ետ այսորիկ այս անունու գտանի ի կարգ համարո եպիսկոպոսացն, այլ մեք որպես գտաք և եղաք:

Եւ ապա

Տէր Մատթէ

Տէր Սահակ, Հինգ

Տէր Մովսէս, Վեց

Տէր Պանդ, Եօթն

Տէր Ղազար, ութ

<sup>2</sup> Մ ո վ ս ե ս կ ա զ ա ն կ ա տ ո ւ ա զ ի. Պատմութիւն Աղուանից աշխարհի (այսուհետև՝ կ ա զ ա ն կ ա տ վ ա ց ի). Երևան, 1983, էջ 342, տարընթերցում տող 13-14:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 342:

<sup>4</sup> Կ ի ր ա կ ո ս գ ա ն ձ ա կ ե ց ի. Պատմություն Հայոց (այսուհետև՝ գ ա ն - ձ ա կ ե ց ի). Երևան, 1961, էջ 192-193:

**Եւ ապա**

Սուրբ մասուկն Գրիգորիս, որդի մեծին Վրթանայ, եղբայր Յուսիկանն, թուն սրբոյ Գրիգորի, զոր առաքեաց մեծ արքայն Հայոց Տրդատ, և սպանեալ եղեւ ի գաշտին Վատնայ վասն վկայութեան աստուծոյ. և բերեալ թաղեցաւ յԱմարաս: Յետոյ նշխարքն գտեալ եղեւ յաւուրս Վաչագանայ, ընդ որս և նշխարք սրբոցն գտեալ եղեն՝ Զաքարիայի, հօրն Յովհաննու Մկրտչի և Պանտալէիմոնի մեծ վկային Քրիստոսի, որ վկայեաց ի Նիկոմիդիայ քաղաքի յաւուրս Մաքսիմիանոսի, զոր տարեալ էր սուրբն Գրիգորիս ընդ իւր:

**Եւ ապա**

**Տէր Զաքարիայ, տասն**

**Տէր Դաւիթ, մետասան**

**Տէր Հովհաննէս, որ Հոնացն եղեւ եպիսկոպոս, երկոտասան**

**Տէր Երեմիայ, երեքտասան: Յաւուրս սորա արար երանելին Մեսրոսի կիրս Աղուանից մեծաւ ջանիւ»<sup>5</sup>:**

**ՄԽԱՒԹԱՐ ԳՈՇ**

«Ճարք հայրապետացն Աղուանից, որք կացին զկնի տեառն եղիշայի որ եկն յԵրուսաղեմէ»<sup>6</sup>:

**Ա. Սուրբն Շուփհաղիշոյ**

**Բ. Մատթէ**

**Գ. Սահակ**

**Դ. Կարէն**

**Ե. Պանո**

**Զ. Ղաղար սա շինեաց զՂաղարապաս դաեալ ի Բեղամէջս, զոր եկեղեղին Պանտալէովնի, եւ շինէ ահաւոր տեսլեամբ:**

Եւ ի սրբոյն Եղիշայէ մինչեւ ցսուրբն Գրիգոր ամք Յ: Եւ ասլա խնդրեցին Աղուանք ի

Հայոց կաթողիկոս զսուրբն Գրիգորիս ի Եֆ ամի ձեռնազրեալի Հայրապետութիւն, եւ ի բարբարոսաց վախճան մահու ընկալու. Հոռոմ թիվ ձԱ էր<sup>7</sup>:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 194-195:

<sup>6</sup> Աղվանից հոգևոր աւաջնորդների այս շարը Միիթար Գոշը կցել է իր «Դատաստանագրիի» հիշատակարանին՝ հետագա ուսումնամիբողներին իսրհուրդ տալով շարունակել այն: Նոր գրում՝ «Համարեցաք ևս զայս եւս հարկաւոր լինել, զի զշոր կարդի հայրապետացն դիցուք զԱղուանից, զի եւ յայնոսիկ յամենեսեանն զսոսա, որ այժմ ունի, յարմարեցուք: Մի ըստ այդմ գրիցուք պատճառի, երկրորդ զի թէ ոք յաւժարեսցի գրել պատմութիւն զկնի գրեցելոյն պատմութեանն Մովսես Դասիուրանեցոյն, որ զրովանդակ պատմէ զտանս Աղուանից, դիրին լիցի յայմանէ զշար Հայրապետացն առնուլ, զի ոչ զամենեցուն անուն ի նորայն գտցէ պատմութեան, բայց զայնոցիկ, զորոց գրեաց: Զի յայն ժամանակէ մինչեւ ցայժմ ոչ ոք գրեաց, եւ թէ պատահի ոք, յոյժ հարկաւոր էք»: (Կ ա ղ ա ն կ ա տ - վ ա ց ի, էջ 350): Սույնի առաջին հրատարակության պատիվը պատկանում է Ղ. Ալիշանին (տե՛ս Վ. Մ. Ալիշ շան Հայապատում պատմիչք և պատմութիւնք Հայոց, յօրինեալ և Հաւայքեալ ի Հ. Ղեոնդեայ. Վենետիկ 1901, 384-391), ապա Վ. Առաքելյանին, որն սկավելով Վենետիկի Միիթարյանների №1237 ձեռագրից, զետեղել է այն Մ. Կաղանկատվացու աշխատության իր հրատարակած բնագրում (տե՛ս Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 350-357), որն էլ մեզ համար ծառայել է որպես հիմք:

<sup>7</sup> Հոռոմ ՆէջԱ-ն (101), ըստ Ալիշանի, Քրիստոսի 351 թ. (տե՛ս Վ. Մ. Ալիշ ի շան նշվացիւ):

Եւ այսոքիկ են, որք ի Զոլ հայրապետք նստան.  
 Զաքարիա  
 Դաւիթ  
 Սուլբն Յոհան  
 Երեմիայ»<sup>8</sup>:

ՄԽԻԹԱՐ ԱՅՐԻՎԱՆԵՑԻ

«Սուլբն Եղիշայ  
 Սուլբն Գրիգորիս  
 Տէր Շուփհաղիշոյ  
 Տէր Մատթէոս  
 Տէր Սահակ  
 Տէր Մովսէս  
 Տէր Պանդ  
 Տէր Ղազար  
 Տէր Գրիգորիս  
 Տէր Զաքարիա  
 Տէր Դավիթ  
 Տէր Յոհան  
 Տէր Երեմիայ»<sup>9</sup>:

Սրանք են պատմիչների թողած Աղվանքի նախակաթողիկոսական շրջանի հոգեոր առաջնորդներին և նրանց հաջորդականությունը մատնանշող ցանկերը: Առաջինը, ինչ անմիջապես աչքի է բնկնում, գրանց հիմնականում միանման լինելն է, որն, անշուշա, միևնույն աղբյուրին ունենալու հետեւանը է: 'Դա վկայում են նաև իրենք՝ պատմիչները, հարդի հետ կապված իրենց վանագան հաղորդումներով: Նկատելի է, որ թե՛ Կիրակոս Գանձակեցին և թե՛ Մխիթար Գոշը, որպես աղբյուր, ունեցել են «Աղվանից աշխարհի սպատմությունը»: Այսպես. Կիրակոս Գանձակեցին, որը նաև միակն է, որ քննադատական մոտեցում է ցուցաբերել իր աղբյուրի նկատմամբ, երկմտություն հայտնելով շարքում Շուփհաղիշոյի հերթականության վերաբերյալ, գրում է. «Ճի որ գրեաց զպատմութիւնն Աղուանից զայս անունս կարդէ յաւորս Վաչագանայ բարեպաշտի լեալ»<sup>10</sup>, որից հետեւում է, որ նա ծանոթ է եղել ինչպես հիշյալ աշխատությանը, այնպես էլ գրանում տեղ գտած հոգեոր հայրերի «անուանց զրին»: Մխիթար Գոշն էլ է հիշատակում «Պատմութիւն Աղուանիցը», գրելով, որ գրանում տուկա հայրապետաց շարքը շարունակել կամեցողների գործն ինքը դյուրացրել է, կազմելով մինչեւ իր ժամանակները եղածների ցուցակը<sup>11</sup>: Նույն գրքի համապատասխան գլուխը հիմք է դարձել նաև Մխիթար Այրիվանեցու համար: Դա անառարկելիորեն ցույց է տալիս այն նմանատիպությունը, որով առանձնանում են գրանց ցանկերը: Երկուսում էլ բառացիորեն նույն անուններն են, նույն հաջորդականությամբ ու թվաքանակով: Ուրեմն,

<sup>8</sup> Կ ա զ ա ն կ ա տ վ ա ց ի էջ 350.

<sup>9</sup> Մխիթարյայ Այրիվանեցոյ Պատմութիւն Հայոց. Մոսկվա, 1860, էջ 19:

<sup>10</sup> Գ ա ն ձ ա կ ե ց ի էջ 192:

<sup>11</sup> Կ ա զ ա ն կ ա տ վ ա ց ի էջ 350.

անտարակույս է, որ մեր պատմիչների աղբյուրը Մ. Կաղանկատվացու անունով մեղ Հասած, երեք գրքից բաղկացած աշխատառւթյունն է։ Իսյց սա դեռ վերջնական նորահանգումը չէ։ Պատմագիտության մեջ ախրապետով կարծիքի համաձայն «Պատմության» միայն առաջին երկու գրքերն են պատկանում VII դ. պատմիչ Մ. Կաղանկատվացու գրչին, իսկ երրորդը գրել է X դ. պատմիչ Մովսես Դասիուրանցին<sup>12</sup>։ Փաստը կարեորվում է նրանով, որ հենց տվյալ գրքում է գտնվում մեզ հետաքրքրող շարքը։ Իսկ սա որոշակիորեն նշանակում է, թե վերջինիս հեղինակը ևս Մ. Դասիուրանցին է։ Շարունակելով Մ. Կաղանկատվացու «Պատմությունը», նա զուգահեռ կազմել է և Հաջորդներին թողել Աղվանքի առաջին քրիստոնյա գործիչների անուններն ու դորժերը։ Հասկանալի է, որ դա նա կարող էր կատարել X դ.։

Այսպիսով, վերոհիշյալ պատմիչների համար որպես հիմնական սկզբնապեր ծառայել է X դ. Մ. Դասիուրանցու կազմած անվանացան-կը։ Ինքը՝ Մ. Դասիուրանցին, ամենայն հավանականությամբ, օգտվել է եկեղեցական գիտանատներում սլահվող ինչ-ինչ գրավոր նյութերից, համամբել Կաղանկատույք գյուղի իր անվանակցի երկու գրքերում սփոված հոգեոր առաջնորդների անունները, ծանոթացել նրանց գործերին և ստեղծել պարփակ մի ցուցակ։ Վերջինս էլ ընկած է բոլոր օրինակների հիմքում և սրանով է պայմանավորված դրանց միատեսակությունը։ Որ նշանած պատմիչների համար Մ. Գասիուրանցու «Պատմությունն» է սկզբնադիր ծառայել, ցույց է տալիս այն, որ նրանք որպես աղբյուր նշում են միայն «Աղվանից պատմությունը» և դրա հեղինակին։ Բայց ընդհանուր նմանություններով հանդերձ ուսումնասիրվող ցանկերն ունեն նաև տարբերություններ։ Այսպես, Մ. Դասիուրանցու և Մ. Այրիվանեցու մոտ կարգաշրերը բաղկացած են 13 անունից, իսկ Կ. Գանձակեցու և Մ. Գոշի մոտ՝ 12։ Առաջին երկուսի մոտ Ա Եղիշային անմիջապես հաջորդում է Մանուկ Գրիգորիսը, որից հետո գալիս է Շուփհաղիշոն, վերջին երկուսի մոտ՝ նախ Շուփհաղիշոն է և ապա Մանուկ Գրիգորիսը։

Մ. Գասիուրանցին, ինչպես նաև Մ. Այրիվանեցին, նշում են երկու Գրիգորի, նրանց հատկացնելով երրորդ և իններորդ տեղերը, իսկ Կ. Գանձակեցին և Մ. Գոշը միայն մեկ Գրիգորի՝ Մանուկ Գրիգորիսին, որը երկուսի մոտ էլ զբաղեցնում է միկնույն՝ Թրդ հորիզոնականը և այլն<sup>13</sup>։

Նշված անհամապատասխանությունների հիման վրա գիտարկվող նյութը կարելի է խմբավորել երկու լսմբի մեջ։ Մեկում (Ա) մեկստեղելով Մ. Դասիուրանցու ու Մ. Այրիվանեցու, իսկ մյուսում (Բ) Կ. Գանձակեցու և Մ. Գոշի ցանկերը։ Ա և Բ խմբերում առկա տարբերությունները ցույց են տալիս, որ Աղվանքի հայրապետների ներկայացված շարքերը վերանայ-

<sup>12</sup> Իրանում Մ. Դասիուրանցին լրացրել ու ամբողջացրել է «Աղվանից աշխարհի պատմությունը»։ Ի դեպ, այս ավարտուն տեսքի բերված տարբերակն էլ եղել է Մ. Գոշի ձեռքի տակ։ Դա պարզորոշ երեսում է նրանից, որ նա առանց այլևայրության հիշատակում է «պատմություն Մովսէսի Դասիուրանեցւոյն», որ զբովանդակ պատմէ առնեն Աղուանից (այսինքն՝ «պատմում է Աղվանից առն ամբողջական պատմությունը» – Հ. Ա.) առն Կ ա - ղ ա ն կ ա ա վ ա ց ի. էջ 350։

<sup>13</sup> Իրացի նշվածներից կան նաև ուրիշ շեղումներ ևս, որոնք սակայն, հարցի քննության համար էական նշանակություն չունեն, ուստի և չենք անդրադառնում դրանց։

ման ու ճշգրտման կարիք ունեն: Ուստի, խնդրի պահանջով, փորձենք անել գա անուն առ անուն քննարկելով:

Սուրբն Եղիշան Աղվանքի առաջին լուսավորիչն է, որ իրավամբ կարող է կոչվել առաքյալ<sup>14</sup> և արդարացիորեն զբաղեցնում է իր պատվավոր առաջին տեղը:

Ցանկերի երկրորդ և երրորդ հորիզոնականները միմյանց միջև բաժանում են Ս. Գրիգորիսը և Ս. Շուփհաղիչոն: Հստ Ա խմբի, նրանցից Ս. Գրիգորիսն է հաջորդել Եղիշային, իսկ ըստ Բ խմբի՝ Շուփհաղիչոն: Սակայն գտնում ենք, որ նրանցից և ոչ մեկն էլ իրենց տեղում չէ: Մասնավորապես Ս. Գրիգորիսի կամ, որ նույնն է, Մանուկ Գրիգորիսի կապակցությամբ ասենք հետեւյալը. ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Ս. Եղիշան Աղվանքում քարոզչական աշխատանքներ է տարել մ.թ. II դ. սկզբներին, իսկ Մանուկ Գրիգորիսը՝ IV դ. 30-ականներին<sup>15</sup>: Հետեւաբար, նրանց միջև ընկած է մի մեծ ժամանակամիջոց: Դա արտացոլված է նաև հայ մատենագրության մեջ: Միիթար Գոշը գրում է. «Եւ ի սրբոյն Եղիշայէ մինչև ցուրբն Գրիգոր ամք Յ, (300-Հ.Ս.)»<sup>16</sup>: Եթե ընդունենք էլ, թե նշված ժամանակամիջոցը չափազանցված է կամ այլ անձշտություններ կան, այնուամենայնիվ, չենք կարող չընդունել, որ դրանց միջև զգալի ժամանակագրական խցում կա: Իսկ այդ ամբողջ, տեսական ժամանակամիջոցում Աղվանքի հայրապետական աթոռը չէր կարող թափուր մնալ: Աղբյուրները հաստատում են, որ Եղիշան ունեցել է աշակերտներ<sup>17</sup>, ասել է թե՝ հետեւողներ և նրանցից ոմանք, անշուշտ, հասել են այդ աթոռին բազմելու պատվին, իբենց հերթին նոր ժառանգորդներ պատրաստելով: Այնպես որ Մանուկ Գրիգորիսը չէր Եղիշայից հետո Աղվանքի առաջնորդական գավազանակիրը: Կարծիքը, թե Եղիշային անմիջապես հաջորդել է Ս. Գրիգորիսը, կազմվել է այն մեծ դերի շնորհիվ, որ նա, ինչպես Եղիշան, ունեցել է Աղվանքի լուսավորության գործում: Պատահական չէ, որ նրանց երկուսին էլ, համահավասար մեծարում են «սուրբ» բառով և համարում Աղվանքում քրիստոնեական հավատի նվիրյալներ: «Զառաքելական հաւատն (Աղվանքում – Հ. Ա.)... նախ ի սրբոյն Եղիշայէ հիմնադրեալ և ապա ի սրբոյն Գրգորիսէ հաստատեալ», – ասկում է նրանց մասին<sup>18</sup>:

Պատմիչներն իր ժամանակից շատ են առաջ գցում նաև Շուփհաղիչոյին, նրան ցանկերում տեղագրելով երկրորդ կամ թեկուզ և երրորդ տեղում: Այդ փաստը նշել է դեռևս Կ. Գանձակեցին՝ վկայակոչելով Մ. Կաղանկատվացուն, որը նրան հիշում է որպես Աղվանքի Վաչագան III Բարեպաշտի (484-510 թթ.) ժամանակակից և Աղվենի ժողովի (488) մասնակից<sup>19</sup>: Եվ պատմիչն իրավացի է, չնայած պահպանում է նրա տեղը երկ-

<sup>14</sup> Հ. Ա. վ ա զ յ ա ն. Սուրբ Եղիշան Հայոց Արևելից կողմանց, Զողա երկրի և Աղվանից աշխարհի լուսավորիչ. – «Լրաբեր հասարակական գիտությունների», 2000, № 2, էջ 55-65:

<sup>15</sup> Հ. Ա. վ ա զ յ ա ն. Սուրբ Եղիշան..., էջ 55-65, ն ու յ ն ի՝ Աղվանքից «կաթողիկոս Մանուկ Գրիգորիս». – «Էջմիածին», 2003, № 6, էջ 39-46:

<sup>16</sup> Կ ա զ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 350:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 10:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 300:

<sup>19</sup> Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 194:

բորդ կարգում, պատճառաբանելով, թե «որպես գտաք և եղաք»<sup>20</sup>: Շուփհաղիչոն, իսկապես, ըստ Մ. Կաղանկատվացու, V դ. վերջերի գործիչ է: Այսպես, խոսելով Մանուկ Գրիգորիսի մասունքների հայտնաբերման մասին, նա պատճում է, որ այդ աշխատանքների ժամանակ, մի խումբ եպիսկոպոսների հետ, Վաչագան III. Բարեպաշտի կողքին էր, իսկ հայտնաբերելուց հետո դրանք տեղափոխելիս էլ նրան ուղեկցում էր Շուփհաղիչոն<sup>21</sup>, ընդ որում նրան կոչելով «զաւագ եպիսկոպոսապետ»<sup>22</sup>: Շուփհաղիչոն մեկ անգամ էլ հիշատակվում է որպես Պարտավի արքեպիսկոպոս, որ Աղվենի ժողովում մասնակցում էր սահմանագրական կանոնագրքի մշակման և բնդուման աշխատանքներին<sup>23</sup>: Նշված փաստը, որ նույն V դ. վերջերն է մատնանշում, ոչ մի կովան չի թողնում կարծելու, թե նա էր Եղիշայի հաջորդը: Իսկ Մանուկ Գրիգորիսի մասունքների հայտնաբերման պատմության մեջ գործուն դեր է հատկացված այդ սրբին, որն էլ բացառում է նաև նրան Մանուկ Գրիգորիսից առաջ կարգելը, ինչպես արել են ցանկերի Բիմբի Հեղինակները, այնպիսի թյուր տպագորություն ստեղծելով, թե նա գտել է իրենից հետո եկած սրբի նշխարները:

Ուրեմն, վիճարկվող առաջնորդներն իրենց տեղերում չեն և պետք է ետարգեն համաձայն նրանց գործած ժամանակների: Այսպիսով, կարելի էր հարցը փակված համարել, եթե ուսումնասիրողներից Հովհաննեցը և Մ. Բարիխուտարյանցն իրենց ցուցակների երկրորդ տողում չհաստատագրեին մի «օտարազգի» կամ «ոմն» մեկի<sup>24</sup>: Աղբյուրների հավաստմամբ վերջինս եկել էր Հոռմից՝ Տրդատ III-ի և Գրիգոր Լուսավորչի հետ, ապա հայոց առաջին կաթողիկոսի կողմից ձեռնագրվելով, ուշարկելի Աղվանիք քարոզչական աշխատանքի<sup>25</sup>: Հոռմեացի քարոզչի կենսագրական տվյալներից երևում է, որ նա մեր քրիստոնյա առաջին դեմքերի ժամանակիցն էր, ուստիև տարիների անջրապետով բաժանված էր Եղիշայից: Իսկ տվյալ պարագան թույլ չի տալիս համաձայնվել վերոհիշյալ Հեղինակների հետ, քանի որ, ինչպես ասել ենք Մանուկ Գրիգորիսի կապակցությամբ (որ հավասարապես վերաբերում է նաև Շուփհաղիչոյին), այդ երկար ժամանակամիջոցում Աղվանքում հովվում էին ուրիշ հոգենոր առաջնորդներ: Ավելին, դժուար ենք, որ նա առհասարակ չպետք է դասվեր Աղվանքի հայրապետների շարքում: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ գալով Աղվանք, օտարազգի կրոնավորը, հավանական է, լեզվական դժվարությունների պատճառով անհաջողության է մատնվել և կարճ ժամանա-

<sup>20</sup> Նույն տեղում:

<sup>21</sup> Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 84-85:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 85: «Եպիսկոպոսների» և նրանց մեջ Շուփհաղիչոյի որպես «ավագ եպիսկոպոսապետի» հիշատակումը ցույց է տալիս, որ նրա օրոք երկրում արդեն ձևավորվել և գործում էր նվիրապետական որոշակի համակարգ, որը միանդամայն բացառվում է Եղիշայի ե. նրանից հետո ընկած երկար ու ժիգ ժամանակներում:

<sup>23</sup> Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 89, Կանոնագիրք Հայոց. Հ. Բ. աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, Երևան 1971, էջ 91:

<sup>24</sup> Սարուագրութիւն կաթողիկէ էջմիածնի հինգ գաւառացն Արարատայ: Աշխատասիրությամբ Յովհաննու եպիսկոպոսի համաթունեանց. Հ. 2. էջմիածնին, 1842, էջ 333: Մ. Բ ա շ մ ի ի ս ո ւ տ ա ր է ա ն ց Պատմութիւն Աղուանից. Հ. Ա. Վաղարշապատ, 1902, էջ 58:

<sup>25</sup> Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 20:

կից հետո, առանց որոշակի հետք թողնելու, հեռացել՝ իր տեղը գիշելով Մանուկ Գրիգորիսին<sup>26</sup>:

Մերմելով նաև այս տարրերակը, շարունակենք մեր դիտարկումները:  
Յանկերի հաջորդ անուններն են.

**Տէր Մատթէ** (*Մատթէոս*)

**Տէր Սահակ**

**Տէր Մովսէս<sup>27</sup>**

**Տէր Պանդ**

**Տէր Ղազար**

Բ. Ուղուբաբյանը, որ անդրադարձել է սույն ցանկին ապացուցելու համար, որ դրանցում հիշատակվածները կաթողիկոսներ չեն, գտնում է, որ նրանք և նրանց հաջորդող մյուս չորս հայրապետները, «իրենց դոյրւթյունը ոչնչով չեն արդարացնում»<sup>28</sup>: Նա հանգում է այդ եղանակությանը, կարծելով, թե Շուտիհաղիչոյի վլաղեցրած տեղը ցանկի երկրորդ (կամ երրորդ) հորիզոնականում իրական է, հետեւբար և նրանից հետո եկողներն են անգո: Մինչդեռ, ինչպես տեսանք, գա այդպես չէ և հեղինակն անճշտություն է թույլ տալիս: Թվարկված հողերը առաջնորդները հերթականությամբ հաջորդել են Ս. Եղիշային և հենց նրանք են այն գործիչները, որոնք լցրել են Եղիշայի ու Ս. Գրիգորիսի միջև ընկած ժամանակագրական բացը:

Յանկերի Թրդ հորիզոնականում տեղ է գտել Գրիգոր անունով հայրապետը: Հիշեցնենք, որ Ա խմբում, նրանից զատ, երկրորդ տեղում, հիշատակվում է ևս մեկ Գրիգոր, որը ըստ հեղինակների, Մանուկ Գրիգորիսն է: Բայց, ինչպես ցույց արվեց վերևում, դա ճիշտ չէ, Մանուկ Գրիգորիսը ուշ ժամանակների գործիչ է և նրա անվան հիշատակությունն այստեղ ավելորդ է, հավանաբար, կրօնական որևէ գործչի ջերմեռանդության արդյունք: Սա չէ պատճառ է դարձել, որ Ա խմբում հանդես դան Գրիգոր անունով երկու սուրբ հողերը՝ հողերը առաջնորդների թիվը հասցնելով 13-ի, Բ խմբի 12-ի փոխարեն: Ուրեմն, որպես ավելորդ, առաջինը պետք է գուրս բերվի իր տեղից, որով սրբերի թիվը երկու խմբերում կհավասարվի: Այսպես վերականգնելով իրականությունը, Ա խմբի ցանկերում էլ Գրիգորը կլինի մեկը՝ թվով Թրդը, ինչպես մյուսներում է: Վերջինս էլ ինքը՝ Մանուկ Գրիգորիսն է, որի իսկությունը դժվար չէ հաստատել հենց ցուցակների հեղինակների տվյալներով: Մովսէս Կաղանկատվացու աշխատառթյան մի խումբ ձեռագրերի աարընթերցումներում սույն Թրդը, օրինակ, ներկայացվում է այնպիսի որակումներով, որոնք հատկանշական են Մանուկ Գրիգորիսին. պահապիկ, Գրիգոր Լուսավորչի թոռ, որ «Հայոց լուսաւորչէ երկու տեսակ փառօք կացեալ ի նոյն աթոռ»: Միսիթար Գոշն էլ, վերջին հինդ հայրապետներից հետո, մատնանշում է Ս. Գրիգորիսին, որը, դեռ

<sup>26</sup> Հ. Ս կ ա դ յ ա ն. Քրիստոնեության Աղյանք ներթափանցման ուղիներն..., էջ 131-141:

<sup>27</sup> Միսիթար Գոշի մոտ «Տէր Մովսէսի» փոխարեն նշված է «Կարեն», մյուս ցուցակներում և լնդհանրապես, նման անունով Հոգեւոր առաջնորդ չի հիշատակվում:

<sup>28</sup> Բ. Ուղ ու բ ա թ յ ա ն. Հայոց Արևելից կողմանց եկալեցին և մշակույթը. Երևան, 2001, էջ 104:

պատանի, աղվանցիների խնդրանքով գարձել է նրանց «կաթողիկոսը», ավելի ուշ նահատակվելով բարբարոսների կողմից: Իսկ այդպիսի ճակատագիր, ըստ Հայ մատենագիրների, ունեցել է Մանուկ Գրիգորիսը<sup>29</sup>: Եվ, վերջապես, Կ. Գանձակեցին նրան ուղղակի անվանում է Մանուկ Գրիգորիս և դրվագներ պաամում նրա մեզ արդեն ծանոթ կենսագրությունից: Ուրեմն, անտարակույս է, որ ցուցակների Թրդ հորիզոնականում նշվածը Մանուկ Գրիգորիսն է և զբաղեցնում է ճիշտ, իր ժամանակներին համապատասխանող տեղը: Իրենց տեղում են նաև Մանուկ Գրիգորիսից հետո եկող սրբերը:

**Տէր Զաքարիա**

**Տէր Դաւիթ**

**Տէր Յոհան**

**Տէր Երեմիա**

Վերջինիս օրոք տեղի է ունենում Աղվանից գրերի գյուտավ Մեսրոպ Մաշտոցի կողմից<sup>30</sup> V դ. սկզբներին, որն ուղղակիորեն մատնացույց է անում Ա. Երեմիայի գործունեության ժամանակաշրջանը՝ V դ. սկիզբը կամ առաջին քառորդը: Հասկանալի է, որ նրան հաջորդելու էր նույն դարի և կեղեցական մի ուրիշ գործիչ: Այսպիսին կարող էր լինել Շուփհաղիշոն, որին վերաբերող տեղեկությունները մեր մատենագրության մեջ ի հայտ են դալիս V դ. վերջին քառորդում տեղի ունեցած իրադարձությունների հետ կապված, և որոնց արդեն առիթ ունեցել ենք անդրագառնալու: Ուրեմն, առանց որևէ երկմտանքի, Շուփհաղիշոյին կարելի է համարել Ա. Երեմիայի հոգեր ժառանգորդը Աղվանքի հայրապետական աթոռի վրա և նրան տեղ տալ ցուցակների ոչ թե երկրորդ կամ երրորդ շարքում, այլ դրանց մեզ հետաքրքրող մասի վերջում՝ Երեմիայից հետո<sup>31</sup>:

Այսպիսով, ինչպես ակներև գարձավ մեր այս քննությունից, Աղվանքի հոգեր առաջնորդների ցանկի ներկայացված հատվածը պետք է վերադասվությալ հետևյալ տեսքով:

1. Սուրբ Եղիշա (Առաքյալ)

2. Տէր Մատթէ (Մատթէոս)

3. Տէր Սահակ

4. Տէր Մովսէս

5. Տէր Պանդ

6. Տէր Ղազար

7. Սուրբ Գրիգորիս (Մանուկ Գրիգորիսի կուսակորչի թոռը)

8. Տէր Զաքարիա

9. Տէր Դաւիթ

10. Տէր Յոհան

11. Տէր Երեմիա

<sup>29</sup> Փաւստոսի հուղանդացւոյ Պատմութիւն հայոց. Երևան 1978, էջ 20, Մ ո վ ս է ս ի ո ւ ն ա ց ի. Պատմութիւն Հայոց (այսուհետեւ ի ո ւ ն ա ց ի). Երևան, 1991, էջ 259: Կ ա լ ա ն կ ա տ վ ա ց ի ա ց ի էջ 31:

<sup>30</sup> Կ ո ւ ի ւ ն Վարք Մաշտոցի. Երևան 1941, էջ 68, ի ո ւ ն ա ց ի. էջ 329, Կ ա - ղ ա ն կ ա տ վ ա ց ի ա ց ի էջ 117-118:

<sup>31</sup> Մ.Բ ա ր խ ո ւ ս ա ր յ ա ն ց ն շ ա շ լ ս.. էջ 80:

**12. Տէր Շուփհաղիշո**

*Սուրբ Շուփհաղիշոյի առաջնորդությամբ Աղվանքում քրիստոնեությունը մտնում է նոր փուլ, որն ուսումնասիրության այլ թեմա է:*

**ДУХОВНЫЕ ПРЕДВОДИТЕЛИ АЛУАНКА  
ДОКАТОЛИКОССКОГО ПЕРИОДА**

*ГЕНРИК СВАЗЯН.*

Р е з ю м е

М. Каланкатуаци и другие армянские историки в своих трудах перечисляли духовных отцов Алуанка как докатоликосского, так и католикосского периода. Однако все сведения источников и их сопоставления выявили, что в списке հայրապետов докатоликосского периода имеется существенный анахронизм. В нем некоторые из них занимают места, несоответствующие их годам и действиям, а исследователи, пользуясь этим списком, не обратили на это внимания. В частности, не на своих местах обозначены св. св. Григорис (Манук Григорис – внук Григора Просветителя) и Шупիалишо. Ошибочным является не только то, что они, заменяя друг друга, фигурируют то на втором, то на третьем месте, но и то, что они отмечены на верхних горизонталях списка. Следовательно, этот список нуждается в корректировке и требует перестановки имен հայրապետов докатоликосского периода. На основе данных первоисточников образуется новый уточненный список:

1. св. Елиша;
2. владыка Маттэос;
3. владыка Տահակ;
4. владыка Մօվսէս;
5. владыка Պանդ;
6. владыка Լազար;
7. св. Григорис (Манук Григорис – внук Григора Просветителя);
8. владыка Զաքարի;
9. владыка Դավիդ;
10. св. Իօվիան;
11. владыка Իերեմիա;
12. св. Շուփհաղիշո.